ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

“ 8 ” փետրվարի 2011թ № 12 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ՍԻՍԻԱՆ-ՍՊԱՆԴԱՐՅԱՆ-ՍԱՌՆԱԿՈՒՆՔ -ԾՂՈՒԿ-ԳՈՐԱՅՔ» ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.14 կետի ա/ ենթակետի դրույթներով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հոկտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մասին» N 1273-Ն որոշմամբ հաստատված կարգի 50-րդ կետի, **ո ր ո շ ու մ եմ՝**

1.Հաստատել Սյունիքի մարզի «Սիսիան-Սպանդարյան-Սառնակունք-Ծղուկ-Գորայք» ներմարզային երթուղում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մարզային մրցութային հանձնաժողովի 2011թ. հունվարի 20-ին անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ արձանագրությունը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպության երթուղու սպասարկման ժամկետ սահմանել երեք տարի:

3.Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2011թ. փետրվարի 8
ք. Կապան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2011թ. N որոշման

Ա ր ձ ա ն ա գ ր ո ւ թ յ ո ւ ն

ՀՀ Սյունիքի մարզի ներմարզային երթուղիներում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության նպատակով անցկացված մրցույթի արդյունքները ամփոփելու մասին

ք. Կապան 2011թ. հունվարի 20 ժ 14-00

ՀՀ Սյունիքի մարզպետի 2010թ. ապրիլի 28-ի N 31 որոշմամբ հաստատված մրցութային հանձնաժողովի կազմը՝ նախագահ՝ Ա.Դոլունց - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, Ա. Ուստաբաշյան - քաղաքաշինության վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ, քարտուղար՝ Ս. Աղաբեկյան - քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի պետ, Ս. Ավետիսյան - ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ, Կ. Կոզմանով-իրավաբանական բաժնի պետ, Ս. Արզումանյան - ՀՀ տրանսպորտային տեսչության Սյունիքի տարածքային բաժնի պետ, Վ.Ծատրյան ՀՀ ճանապարհային ոստիկանության ներկայացուցիչ, 2-րդ գումարտակի 6-րդ վաշտի, 2-րդ դասակի հրամանատար:

Քննարկեցին 2011թ. հունվարի 20-ին կայացած «Սիսիան-Սպանդարյան-Սառնակունք-Ծղուկ-Գորայք» երթուղում մրցույթի արդյունքները:

Սիսիան-Սպանդարյան-Սառնակունք-Ծղուկ-Գորայք ներմարզային երթուղում հայտ էր ներկայացրել անհատ ձեռնարկատեր-Մեխակ Ալեքսանյանը (գտնվելու վայրը՝ ք.Սիսիան, Իսրայել Օրի 1բ/10):

Մրցութային հանձնաժողովը «Սիսիան-Սպանդարյան-Սառնակունք-Ծղուկ-Գորայք» ներմարզային երթուղու մրցույթի արդյունքում կայացրած քվեարկությամբ (կողմ-6, դեմ 0,ձեռնպահ-0) հաղթող ճանաչեց անհատ ձեռնարկատեր Մեխակ Ալեքսանյանին:

Արձանագրության արդյունքները երկշաբաթյա ժամկետում անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Սյունիքի մարզպետին համապատասխան իրավական ակտ ընդունելու նպատակով:

Հանձնաժողովի նախագահի տեղակալ **Ա.Ուստաբաշյան**

Անդամներ **Ս.Աղաբեկյան**

Կ.Կոզմանով

Ս.Ավետիսյան

Ս.Արզումանյան

Վ.Ծատրյան